ի թվաբերութեանս Հայոց Ռ. և ի Խ (=1591), ձեռամբ Հիզանցի խաչատուրի, ի խնդրոյ պատուական եղբաւր մերոյ հեզ եւ խոնարհ դպրի պր. խտրշահի ի վայելումն անձին իւրոյ, զոր տէր բարով վայելել տացէ սմայ յերկար ժամանակօք եւ խոր խաղաղութեամբ, ամէն։

Արդ՝ որք հանդիպիք սմա, յիշման արժանի արարէք ի տէր, միով Աստ. ողորմայիւ զքաջ և զարի դպիրն զխտրշահն և զծնողսն իւր և զամ. զողջատոհման իւր։ Ընդ նոսին եւ զդատարկացեալս յամենայն գործոց բարեաց. զյետինս ի գրչաց, զխաչատուր սուտ քահանայն եւ զամենայն ազգատոհման իմ յիշեցէք և Աստ. ձեզ եւ մեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալըստեանն ամէն։» (Հայկի Ձեռ. թ. 117)։

Կարսի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ կը գտնուի նաեւ Խիզանցի Խաչատուր քհ.ի 1599 թուին Էրզրումի մէջ ընդօրինակած նկարազարդ Աւետարանը, որուն յիշատակարանն է հետեւեալը. «աւարտեցաւ ոսկէտուփ սուրբ աւետարանս ի քաղաքիս Թէոդոսպոլիս, որ կոչի Արզրում ի թուին մերում ՌԽԸ (=1599), ձեռամբ խաչատուր քահանայի հիզանցւոյ, որ բազում աշխատանօք և պանդխտացեալ կենօք զարդարեցի զսուրբ աւետարանս ոսկով և լաջվարդով և այլ երագ երագ? (երանգ երանգ) գունով ի խնդրոյ աստուածասէր քրիստոնէին պարոն խաչատուրին, Աայլն.» (Լուսայ, 1903, համար 5, էջ 59)։

ԽԱՉԱՏՈՒՐ ՔՀ. ՏԱՐՈՆԵՑԻ.— 1843 ին Ռեմլէի նորահաստատ Ժառ. Վարժ.ի մէջ ուսուցիչ հայերէն լեզուի. (Սաւաղան. էջ 1249)։

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՖԱՅԵԱՆ, (ՆԱՐ ՊԷՑ), ՊՈԼՍԵՑԻ.— Ծ. 1831ին, աշկ. և Մբ. Մխիթարեան ուխտին, Վենետիկ. եղբայրը Ամբրոսիոս վրդ. Գալֆայեանի. Ձռ. 1854ին. Փարիզի Հայկազնեան Վարժարանի տեսուչներէն մին (1857-1859). կը դառնայ մայրենի եկեղեցիին դիրկը 1857 ին. վարած է քարոզչական, վարչական և կրթական պաշտօններ. 1867 ին իբր պատուիրակ ընկերացաւ Գէորգ Դ. կթղին. Ս. Էջմիածին երթալու, և նոյն թուականին եպս. ձեռնադրուեցաւ և կթղին. հետ ճամբորդեց Ռուսաստանի հայաբնակ քաղաքները և վերադարձաւ Պոլիս։ 1878ին իբր պատուիրակ Պէրլինի վեհաժողովին՝ նոյն ատեն